# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 24

«09» 04 2018թ. գ. Երևան

## ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 48 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

**Հրամայում եմ՝**

1. Հաստատել հայեցողական պաշտոնների անվանացանկը, հաստինքների քանակը և հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում հայեցողական պաշտոնների հաստիքացուցակը հաստատելու մասին» N 48 հրամանը:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

ՀՀ գլխավոր դատախազի
«09» 04 2018թ.

N 24 հրամանի

## ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

| N | Պաշտոնների անվանումը | Հաստիքների քանակը |
|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական | 4 |
| 2 | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական | 3 |
| 3 | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական | 4 |
| | | *Ընդամենը՝ 11* |